զատապարտութիւն, նոյնպէս եւ միոյն արդարու-
թեամբ եւ յամենայն մարդիկ արդարութիւն կենաց:»
ՀԿԱ. Ե. 48:

12. Ապականեցան մարդկան ողիք մեղացն ախ-
տիք, եւ մարմինք ցաւալից վտանգիք ի հող դառ-

նալ եւ յերկիր ապականիլ վիճակեցաւ: Ասու: Է ՄԵՒՆ:
Ճ. մ. մ. Ք. Ք.:

45. Որպէս Աղամաւ ամեներին մեռանին, նոյնպէս
եւ Քրիստոսիւ ամեներեան կննդանացըն: Ա. Կ. Ք.
Ժ. 22:

44. Եւ որդիքն արքայութեան երկնից ելցին ի
խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրծել ատա-
մանց: Ի Մ. Պ. Ը. 42:

45. Որ հաւատացէ եւ մկրտեսցի՛ կեցցէ: Մ. Ք.
Ժ. Զ. 46:

46. Եթէ որ մեղիցէ, ունիմք բարեխօս առ Ա. Ա-
տուած զթխուս Քրիստոս զարդարն եւ զանարապն,
եւ նա է քաւութիւն մեղաց մերոց: Ա. Յ. Ք. Բ. 2:

47. Ա՛չ եկի լրտանել զօրէնս կամ զմարդարէս,
այլ լնուլ: Մ. Պ. Ե. 47:

48. Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք
եւ մարդարէք կախեալ կան: Ա. Դ. Ի. Բ. 40:

49. Զի՞ ի սրտէ ելանեն խորհուրդը չսրբ, սպանու-
թիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայու-
թիւնք, հայնոյութիւնք, այս ամենայն է, որ պղծէ բղ-
մարդ: Ա. Դ. Ի. 47:

50. Վաճառեն զինչս քո եւ տներ աղքատաց, եւ
չկ զինի իմ: Մ. Պ. Ժ. Բ. 24,

24. Որ զայ զինի իմ, ուրասցի զանձն իւր: Ա. Դ.:

25. Են ներքինփ, որք զանձննս իւրեանց արա-
րին ներքինփս վասն արքայութեանն Ա. Ս. Ս. Օ. Ե. Պ. Ա. Դ.:

25. Սիրեցէք զթշնամիս ժեր. բարի արարէք ատե-
յեաց մերոց: Ա. Դ. Ե. 44:

24. Որ հարկանէ զծնօս քո, դարձն նմա եւ ըզ-
միւն: Ղ. Ա. Ք. Զ. 29:

25. Ամենայնի որ խնդրէ ի քէն՝ տներ, եւ գոր
ինչ հանէ որ ի քէն, մի պահանջեր: Ա. Դ. 50:

26. Խօսւեցանք զնշմարտութիւն, եւ մշմարտու-
թիւնն ազատեսցէ զծեղ եղիցի ժեր բանն այսո՞ այո,
եւ ոչն ոչ. Ա. Դ.:

27. Եթէ ակն քո դայթակղեցուցանէ զքեղ, հան
եւ ընկեա ի քէն: Մ. Ք. Բ. 46:

28. Մի առնիցես զազօթս եւ զարդարութիւն ա-
ռաջի մարդկան, եւ մի զիտացէ աջ քո, զինչ գոր-
ծեաց ծախս քո: Մ. Պ. Զ. 5. 4:

29. Ասեն եւ ոչ առնեն, կապեն մարդկան բեռինս
ծանունս, եւ բնիեանք մատամբ ոչ մերձենան ի նա:
Ա. Դ. Ի. Գ. 4:

30. Մի հոգացէք վասն վաղուին թէ զինչ ուտի-
ցէք, զիտէ չայրն ժեր զինչ պիտոյ է ժեզ: Մ. Պ. Զ. 56:

54. Եթէ մեկիցէ քեզ եղբայրն քո, Արթ առանձ
ծինն եւ խրատեան գնա: Ղ. մ. կ. Ժ. 5—4:

55. Որ ո՞չ հնագանդի որդեւոյ, ոչ տեսցէ զվեանս,
այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա:
Յ. մ. կ. Գ. 54:

56. Մեղք մեր որոշեն ի մէջ մեր եւ ի մէջ Աս-
տուծոյ: Ե. մ. կ. Ծթ. 2:

57. Առ հասարակ ատելի են Աստուծոյ ամբարը-
տեան եւ ամբարշտութիւն իւր: Խ. մ. ա. մ. Ճ. Գ. 9:

58. Ամենայն մեղք եւ հայիոյութիւնք Թողցին
մարդկան, բայց զնոգոյն հայնոյութիւն մի Թողցի:
Մ. ա. մ. Ճ. Բ. 54:

59. Յուսահատութեամբ Թողութիւն մեղաց ոչ լի-
նի: Խ. մ. կ. Է. Ա. է. Ճ. ա. մ. ա. բ. ի. կ.:

60. Միապէս մատնէ կորստեան եւ զլցումն ուժ-
գնապէս, եւ մեղանցելն մոլեզնաբար: Ն. ա. է. է. բ. ա. մ. Ժ.:

61. Եթէ յանցանիցեմք կամակար մտօր, յետ ըն-
դունելութեան զիտութեան նշանարտութեանն, այնու-
թետեւ ոչ եւս պիտոյ է վասն մեղաց պատարագ, այլ
ահեղ ակնկալութիւն դատաստանին եւ նախանձ հլ-
ոյն, որ ուտիցէ զիակառակորդամ: Ե. բ. Ճ. 26. 27:

62. Անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ
ունիցէ զողորմութիւն: Յ. մ. կ. Բ. 45:

40. Այլ բատ խստութեան քում եւ ըստ անգեղջ սրտի զանձես անձին քում բարկութիւն յաւուր բարկութեան եւ յայտնութեան արդար զատաստանին Ա.ստուծոյ: Հայութ. Բ. 5:

41. Որք անզեղջ աստի գնան, այլ բարեաց ակն ունել ոչ է, այլ պատիժ պատուհասի: Խոր. է Մէկն. Ժամանէրէ:

42. Եթէ ասիցեմք մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս խարեմք, եւ ճշմարտութիւն ի մեղ ոչ զոյ. ապա եթէ խոստովան լինիմք զմեղս մեր, հաւատարիմ է նաև եւ արդար առ ի թողուլ զմեղս մեր: Ա. Յութ.

8—10:

43. Քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա, եւ զմեղս նոցա եւ զանօրէնութիւնս նոցա ոչ եւս յիշեցից: Եթր. Ը. 42:

44. Որ ո՞ն զիսէր մեղս՝ վասն մեր մեղս արար, զի մեր եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ: Բ. Կոբ. Ե. 24:

45. Որ հաւատայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենականս: Յութ. Դ. 56:

46. Հաւատոք առանց զործոց մեռեալ են. Սքրահամ հայր մեր ոչ ապաքէն ի զործոց արդարացաւ, հանեալ ի մեղան զորդին իւր Խահակ պատարագ.

տեսանես՝ զի ի գործոց արդարանայ մարդ, եւ ոչ ի
հաւատոց միայն: Յաէ, Բ. 24 — 25:

47. Աստուած որ մեծն է ողորմութեալին ։ . . .
զմեռ՝ մինչ դեռ մեռեալ էաք ի մեկա մեր՝ կենդանի
արար ի Քրիստոս: Եթէ՞ Բ. 4. 5:

48. Հաւատքն եղին գործակից գործոց նոցա, եւ
ի գործոց անտի հաւատքն կատարեցան: Յաէ, Բ. 22:

49. Չորօրինակ մարմին առանց հոգեոյ մեռեալ է,
ույնպէս եւ հաւատք առանց գործոց: Անդ. 24:

50. Խսկ որ յառեալ ի կատարեալ օրէնս ազա-
տութեամն հայիցի, եւ ի նմին կացցէ, ով եղեւ նա
յոդ մոռացութեան, այլ արնոր գործոյն, նա յանենի
իւրամ լիցի երանելի:

51. Այս է ուխտն զօր ուկանեցից տանդ խրայէ-
լի յետ առուրցն այնոցիկ, ասէ տէր տաց զօրէնս իմ
ի միւս նոցա, եւ ի սիրտս նոցա գրեցից զոտսա: Ե-
թէ՞ Ա. 55:

Ես առ մասնիկ զօրոցից պրու ստուան զի ։ . . .
ուստի առ մասնիկ զօրոցից պրու ստուան զի ։ . . .
առ մասնիկ զօրոցից պրու ստուան զի ։ . . .
առ մասնիկ զօրոցից պրու ստուան զի ։ . . .
առ մասնիկ զօրոցից պրու ստուան զի ։ . . .
առ մասնիկ զօրոցից պրու ստուան զի ։ . . .
առ մասնիկ զօրոցից պրու ստուան զի ։ . . .

Դասուած է մի ճացուած Նշան և այսու համար
ու ա (Յ արձական աշում վայրին մարդ) և ասէ

ՄԱՍՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԵԿԵՂԵՑԻ ՔՐԻՍՏՈՆԵՒԹԻՒՆ

Հ. Զի՞նչ է Եկեղեցին Քրիստոսի:
Պ. Ճողով ճշմարիտ հաւատացելոց ի Քրիս-
տոս 1):

Հ. Վասն Էլ Եկեղեցի կառուի հաւատացելոց
ժողովը:

Պ. Վասն այն, որ Քրիստոս իւր արեամբ
փրկեց իւր անօւան հաւատացեալները, խացի վե-
րաց պատարագելով 2): և ինքն Եղաւ իւր Եկե-
ղեցոյ հաւատոյ հիմն 3):

Հ. Ի՞նչ յատկութիւն ունի Եկեղեցին Քրիս-
տոսի:

Պ. Քրիստոսի Եկեղեցին չըրա յատկութիւն
ունի որ է Մի, Սուլը, Կաթողիկէ և Առաքելա-
կան 4):

Հ. Ինչո՞ւ համար է Մի:

Պ. Նորա համար որ ամեն հաւատացեալ
Քրիստոնեաց ազգերը հոգեոր և ներքին միութեամբ

116

Հաւատոց՝ յուսոյ և սիրոյ՝ միացած են Քրիստոսի հետ 5), իբրև անդամք նորա մարմնոյն 6), և իբրև մի մարմին մի զիսոյ հետ 7).

Հ. Ի՞նչ մտօք Սուրբ կը կոչուի:

Պ. Քրիստոսի Եկեղեցին սուրբ կասուի, որ ամեն մոլար վարդապետութենէ ազատ է 8), և Եկեղեցւոյ անդամները սրբեալ են աւագանի մկրտութեամբ և առ Քրիստոս ունեցած հաւատքով 9):

Հ. Կաթուղիկէ Ի՞նչ մտքով կասուի, և կաթուղիկէ ի՞նչ ասել է:

Պ. Կաթուղիկէ Յօնարէն է, և կնշանակէ Ընդհանրական, և նորա համար Ընդհանրական կասուի, որ եթէ մէկը քրիստոսական հաւատքով Եկեղեցւոյն զիմէ, Եկեղեցին առանց խորութեան կընդունի զնա՝ ի նչ ազգէ որ լինի 10). որով և կտարածուի Ընդհանուր տիեզերը :

Հ. Առաքելական ինչո՞ւ համոր կասուի:

Պ. Նորա համար, որ հասուատուած է Քրիստոսի Եկեղեցին Առաքելական քարողութեանց վերայ անդրդուելի 11):

Հ. Քանի՞ կրաժանուի Քրիստոսի Եկեղեցին:

Պ. Երկու՝ Զինուորեալ և Յաղթական:

Հ. Ո՞րն է զինուորեալ:

Պ. Աննդանի հաւատացելոց բազմութիւնը որ իբրև Քրիստոսի զինուոր, հոգևորապէս զինուուրած են աշխարհքիս խաւարային իշխանութեան դէմ 12):

Հ. Յաղթականը ո՞րն է:

Պ. Բոյոր ննջեցեալք ի Քրիստոսու որք իւրեանց կենաց մէջ մեղաց և աներեւյթ թշնամւց զօրութեան դէմ պատերազմլով, իբրև յաղթական զինուոր՝ վախճանեցան անթառամ՝ պսակն ընդունելու 13), յեկեղեցիս Անդրանկաց ի վերինն Երուսաղէմ 14):

Հ. Տաճարք և աղօթատեղիքը Ի՞նչ մտքով Եկեղեցի կասուին:

Պ. Որովհետեւ հաւատացեալք նոցա մէջ միատեղ կտողովին զԱստուած պաշտելու 15). ըստ որոյ և յարմարութեամբ միայն Եկեղեցի կասուի և ոչ իսկութեամբ 16):

Հ. Եկեղեցւոյ ուղղափառութիւնը ինչո՞վ կը ճանաչի:

Պ. Նորա հաւատոյ վարդապետութեամբը՝ երբ համաձայն կլինի այն Աստուածաշոնչ գրոց պատուիրանաց, դաւանութեան քրիստոսական

Հաւատոյ Առաքելական քարոզութեանց և Տիեզիրական ժողովոց կանոնաց:

Հ. Եկեղեցւոց բարեկարգութիւնն ի՞նչ է:

Պ. Հաւատացեածոց միակրօն և միաբան դաւանութիւնը, և սրբազն արարողութեանց պահպանութիւնը (17):

Հ. Ո՞վ է Եկեղեցւոց կառավարիչը:

Պ. Եկեղեցւոց կառավարիչն Քրիստոս է, որ խոստացաւ անբաժին մնալ իւր հաւատացեալներն մինչև ցկատարած աշխարհ (18), ուստի և իւր եկեղեցին կառավարելու՝ նորոյ ուստի սպասաւոր ները կարգեց, և նորա խորհրդոց հազարապետները՝ հովուել զժողովաբերդ Տեղան (19):

Հ. Եկեղեցւոց հովուաց պաշտօնը ի՞նչ է:

Պ. Հաւատացեածոց Աստուածային բանը քարոզել (20), Խորհուրդները մատակարարել (21), և Տիերձուածները հերքել (22):

Հ. Զի՞նչ է Տիերձուածն:

Պ. Սուտ ու, մողար Վարդապետութիւնը և Քրիստոսական Եկեղեցւոց ուղղափառ հաւատոյն դեմ՝ թիւր մեկնութիւնը:

Հ. Այդպիսի Տիերձուածները ո՞ւր դատապարտուեցան:

Պ. Ընդհանրական Եկեղեցւոյ տիեզերական ժողովներում:

Հ. Տիեզերական ժողովը քանի՞ն և որո՞նք:

Պ. Մեր Հայաստանեայց Եկեղեցին տիեզերական երեք ժողովը կընդունի միայն, որոնք ուղղակի Քրիստոսական հաւատոյ վերաց եղած հերձուածոց գէմ եղան, որը են,

Առաջին՝ Կիկինց Ա. Ժողովը որ եղաւ Քրիստոսի 325 թուականին. ուր երեք Հարիւր տասն և ութ Հայրապետաց ժողովավ Արիոսի աղանդը մերժեցին, որ Քրիստոսի Աստուածութիւնը կուրանայր, և սահմանեցաւ հաւատոյ Հանգանակը:

Երկրորդն՝ Կոստանդնուպօլսոյ Ա. Ժողովը յամի 381, ուր Հարիւր յիսուն Հայրապետաց Ժաղովով մեծուեցաւ Մակեդոնիա պանդը որ Հոգուն սրբոց Աստուածութիւնը կուրանայր, և սահմանեցաւ Հոգին սուրբը գաւանել համապատիւ և համագոյ Հօր և Որդւոյ:

Երրորդն՝ Եփեսոսի Ա. Ժողովը յամին 431. ուր երկու Հարիւր Հայրապետաց ժողովով հերքեցաւ աղանդն Նեստորի, որ մի Քրիստոսը երկու կրամանէր, և սահմանեցաւ գաւանել աստուածային

և մարդկային բնութեանց անշփոթ և անխառն
միաւորութիւնը՝ ի մի Քրիստոս :

Հ. Ուրեմն հարկ է սուրբ Համարել զեկեղեցական կանոնները :

Պ. Անպատճառ, ըստ որում Քրիստոս Եկեղեցւոյ կանոնները արհամարհողները՝ անհաւատների հետ կդատապարտէ 25) :

Հ. Ի՞նչ են Խորհուրդք Եկեղեցւոյ :

Պ. Սրբազն արարողութիւնք, որոնք դդալի նշաններով հաւատացելոց կարգեան աներևութաբար Աստուծոյ շնորհքը 24) :

Հ. Այս սրբագրծութիւնները ինչո՞ւ համար Խորհուրդ կասուին :

Պ. Նորա համար որ՝ արարողութիւնը յայտնի կատարուելով, ընդունողը աներևութաբար շնորհ կառնու Քրիստոսէ սահմանած էական բառնը ասելով :

Հ. Եկեղեցւոյ Խորհուրդները քանի՞ են :

Պ. Այս եօթը :

ա. Մկրտութիւն,

բ. Քրոշմ,

գ. Ապաշխարութիւն,

դ. Հաղորդութիւն,

է. Պսակ,

շ. Կարգ կամ Զեռնադրութիւն,

է. Օծումն հիւանդաց :

Հ. Ո՞վ սահմանեց այս Խորհուրդները :

Պ. Քրիստոս Տէրն մեր 25) :

Հ. Այս ամեն Խորհուրդները հարկաւո՞ր են :

Պ. Առաջին չորսը հարկաւոր են փրկութեան համար 26), իսկ վերջին երեքը փափագողք միայն կընդունին 27) :

Հ. Այս Խորհուրդները կարելի՞ է կրկնել թէ ո՞չ :

Պ. Անկրկնելի են Մկրտութիւն, Քրոշմ և Կարզը իսկ մնացած չորսը հարկաւոր եղած ժամանակը կարելի է կրկնել 28) :

Հ. Ինչո՞ւ համար անկրկնելի է մկրտութիւնը :

Պ. Ըստ որում մկրտութիւնը օրինակ է Քըրիստոսի մահուան 29), որ միանդամ մեռաւ մեր համար, և միւսանգամ մեռանելու չէ 50) :

Հ. Քրոշմն և կարգ ի՞նչ մտաք չեն կրկնուիլ :

Պ. Աստուծոյ շնորհքը անդառնալի են և անփոփոխելիք՝ որոց վրայ կը կատարուին այս Խորհուրդք, և ընդունողաց հոգւոյ մէջ կտպաւորի իրեւ կնիք :

ԱԿՈՅՈՒԹԻՒՆՔ ՏՌԱՆԵԲՈՐԴ ՄԱՆԵՒ:

1. Եւ եղեւ երկիւղ մեծ ի վերայ ամենայն եկեղեցոյն . հաճոյ թուեցաւ առաքելոցն եւ երիցանց ամենայն եկեղեցեաւն: Գործ. Ե. 44. Ը. 5:

2. Փրկեցայք պատուական արեամբն Քրիստոսի...
որք նովաւ հաւատացիք յԱպուած: Ա. Պէտր. Ա.

17 — 24: Հիմն այլ որ ոչ կարէ զնել քան զեղեալն, որ
է Յիշաւ Քրիստոս: Ա. Կոբ. Գ. 44:

4. Հաւատամք եւ ի միմիայն ընդհանրական եւ
առաքելական եկեղեցի: Ե. Հանդանակն հաւատոյ:

5. Աղջամք զմեզ . . . պահել զմիարանութիւն
հողուոյ յօդիւ խաղաղութեան, մի մարմին եւ մի հո-
գի. որպէս եւ կոչեցարուք ի մի յոյս կոչման ծերոյ.
մի է տեր եւ մի հաւատ: Եկեղ. Գ. 4 — 6:

6. Անդամք եմք մարմնոյ նորա: Անդ. Ե. 30:

7. Եւ զնա (դՔրիստոս) եղ զուլի ի վերայ ամենայն
իրիր եկեղեցոյ, որ է մարմին նորա: Անդ. Ա.

22:

8. Զի կացուսցէ ինքն իր յանդիման փառաւոր
զեկեղեցի, զի մի ունիցի ինչ արաւ կամ աղտևու-
թիւն: Անդ. Ե. 27:

9. Որպէս եւ Քրիստոս սիրեաց զեկեղեցի եւ
զանձն իւր մասնեաց վասն նորա, զի զնա սրբացէ,
սրբութեամբ աւազանին բանիւ: Անդ. 26:

10. Որք միանդամ ի Քրիստոս մկրտեցարուք,
զՔրիստոս զգեցիալ էք, չիք խափի ոչ հրէի եւ աջ հե-
թանոսի: Գ. Ա. Դ. Դ. 27:

11. Քարողեսցի աւետարանս արքայութեան ընդ
ամենայն տիեզերս: Սարք. ԽԹ. 44:

12. Եկեղեալք ի վերայ հիման առաքելոց եւ մարգար-
էիյ: Եկեղ. Բ. 4:

13. Զի թէսկէտ եւ մարմնով զնամք, այլ ոչ եթէ
ըստ մարմնոյ զինուորիմք, զի զէն զինուորութեան
մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ առ
ի քակելոյ զամուրս: Բ. Կոբ. Ճ. 5 — 4:

14. Այսուհետեւ կայ մնայ ինձ արգարութեան
պսակն: Բ. Տէր. Գ. 7:

15. Փոխեցայք յերկրայնոց ի յերկինս, ընկարայք
ի Քրիստոսէ զպակս անապականս: Շարուման:

16. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած, եւ զտէր
յաղթերացն Խրայէլի: Սարք:

17. Սովորութիւն ունիմք եկեղեցի անուանել զա-
զութեանն յարանունաբար, այլ ոչ բնաւորաբար: Սա-
հաէ կանոնագիւն ի ժորան եկեղեցւոյ:

17. Զի ոչ եթէ խորվութեան է Աստուած, այլ
խաղաղութեան . . . եւ ամենայն ինչ մեր պարկեց-
տութեամբ եւ ըստ կարգի լինիցի: Ա. Կոբե. Դ. 55.

40:

18. Ես ընդ մեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ի
կատարած աշխարհի: Մատ. ԽԸ. 20:

19. Զգոյշ կացէք անձանց եւ ամենայն հօտիդ, յո-
րում եղ զճեզ չողին սուրբ տեսուչ հովուել զժո-
ղովուրդ Տեառն: Գործ. Խ. 28:

20. Եւ դու քարոզեա գրան. հաս ի վերայ ժա-
մու եւ ի տարաժամու: Բ. Տիմ. Դ. 2:

21. Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ իրեւ
պաշտօնեայս Քրիստոսի եւ հազարապես խորհրդոցն
Աստուծոյ: Ա. Կոբե. Դ. 4:

22. Պարտ է եպիսկոպոսին . . . վերակացու լի-
նել հաւատարիմ բասին վարդապետութեան, եւ ըզ-
հակառակորդն կշտամբէլ: Տիմ. Ա. 7—9:

23. Ապա եթէ եւ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի
բեզ իրեւ զհեթանոսսն եւ զմաքաւորս: Մատ. ԺԸ.

47:

24. Ո՛չ ինչ անվայելուչ եւ անսրբազան է ունել
խորհրդոց Եկեղեցւոյ զգալի պատկերս, այլ աստուա-
ծարժան տեսութեան է օրինակս կերպացուցանել

բնաւորականօր եւ մարդավայելուչ պատկերօր: Դէմ-
Նէմէն, է չէր- Եէլ- +ահանայ- Եէլ-:

25. Արգին Աստուծոյ վասն այնորիկ եկեալ մկրտ-
տի, հաստատել զմկրտութիւն ամենայնի որ մկրտե-
լոց իցեն: Ա. Կոբե. Ե. 1:

26. Ար հաստայ եւ մկրտեսցի՝ կեցցէ: Մատ. ԺԸ.

ԺԶ. 15:

27. Եթէ ոչ ունիցին ժոյժ, ամուսնասցին. զի լաւ
է ամուսնանալ, քան զչեռնուկ: Ա. Կոբե. Ե. 9:

28. Զի որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է, ա-
պաշխարհութիւն ի վրկութիւն առանց զղանալոյ
գործէ: Բ. Կոբե. Ե. 10:

29. Որբ միանգամ մկրտեցայթ ի Քրիստոս Յի-
սուս, ի մահ անդր նորա մկրտեցայթ: Համակ. Զ. 9:

30. Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է ի մե-
ռելոց, այսուհետեւ ոչ մեռանի: Անդ:

ի մահ կթաղումնք նոյնպէս և նորա չետ յա-
րութիւն առնելու եմք ի կեանս 5):

Հ. Մկրտութիւնն ի՞նչ զիտաւորութեամբ կը
կատարի:

Պ. Ազամայ սկզբնական մեղքէն ազատելու,
և թէ որ մլրտուողը չափահաս է, ներդրծական
մեղաց ևս թողութիւն գտնելու 6):

Հ. Ի՞նչ պէտք է մլրտուողին:

Պ. Հաւատալ Քրիստոսի 7), և աւետարա-
նական օրէնքով նոր կեանք վարել 8):

Հ. Մկրտութիւնը հարկաւոր է փրկութեան
համար:

Պ. Այս ըստ որում առանց մլրտութեան
հաւատացեալն չէ կարող փոկուիլ 9):

Հ. Մկրտութեանը ի՞նչ կհարկաւորի:

Պ. Կիւթ՝ արարողութեան ձեր ենթակայ
որ է մլրտուողը, պաշտօնեայի և էական բանն,
որ խորհուրդը կը կազմէ 10):

Հ. Ի՞նչ աւագինութեան պատճառ կլինի
մլրտութիւնը:

Պ. Հաւատոց և մլրտուողին զայն կզահնջէ:

Հ. Ուրեմն նորածին երեխայից ինչո՞ւ կորուի
մլրտութիւն:

Հ. Տարբերակ չողմանարքն ու զօնափառական
արքի բարձր թիմակ մասն անհամար ունի 11):

Ա. Մկրտութիւնը լուսական է:

Պ. Խորհուրդ եկեղեցւոյ որով հաւատացեան
ըստաբուօտ ջրով լուացուելով, ի ներքուստ
կրտքուի սկզբնական մեղքի և մլրտութեան ա-
ւազանի շնորհիւ կծնանի որդի Աստուծոյ 1):

Հ. Մկրտութեան խորհուրդը ով սահմանեց :

Պ. Քրիստոս Տէրն մեր որ յօրինակ մեղք
մլրտելով ի Յորգանան, նոյնը պատուիրեց իւր
աշակերտաց՝ գնալ և աշակերտել ամենայն հե-
թանոռներու մլրտել զնոսայ յանուն Հօր և Որ-
դոյ և Հոգւոյն սրբոյ 2):

Հ. Մկրտութիւնն ի՞նչպէս կը կատարուի:

Պ. Մկրտուողը երեք անգամ ընկղմելով ի
ջուր՝ յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ 5):

Հ. Ի՞նչ կնշանակէ երեք անգամ ի ջուր ըն-
կղմելն :

Պ. Քրիստոսի երեքօրեայ թաղումը 4), որ
ցոյց կտայ թէ ի՞նչպէս մլրտութեամբ նորա չետ

Պ. Ծնողաց հաւատքին նայելով, և կերա-
հօր երաշխաւ որութիւնը որոնք կպարտաւորվին
քրիստոնէական հաւատով կրթել զերեխայս, զո-
րոնք և Քրիստոս չի՝ մերժեց 44):

ՎԿՈՅՈՒԹԻՒՆՔ Ա. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ.

4. Աւազանն զմեղ ծնանի վերստին՝ որդիանալ Առ-
տուծոյ, ազատելով ի մեղաց, եւ կենագործելով յան-
մահական կեանա: Խոս. է Մէհն. Ժամագրեւ:

2. Մատ. Իլ. 49:

3. Զորօրինակ մահուն Քրիստոսի յինքն նկարագրէ
մկրտութիւն աւազանին, երիցս ընկամելն ի ջուրն՝ զե-
րեքրեայ թաղումն Յիսուսի նշանակէ: իսկ իշանել
յաւազանն եւ ելանել՝ զյարութիւն Տեառն գուշակէ:

Ս. Շնորհ. է Մէհն. Ա. Պէտ. Ժամ. Բ:

4. Թաղեցուք ընդ նմին (Քրիստոսի) մկրտու-
թեամբն ի մահ: Հունվ. Զ. 5:

5. Զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փա-
ռօքն հօր, նոյնպէս եւ մեք ի նորոգումն կենաց շըր-
շիցուք: Անդ. Յ:

6. Մկրտեսցի իւրաքանչիւր որ ի ծէնչ յանուն
Տեառն Յիսուսի Քրիստոսի, ի Թողութիւն մեղաց:
Գործ. Բ. 58:

7. Որ հաւատայ եւ մկրտեսցի՝ կեցցէ: Մատ. Իլ.
49:

8. Հաւատամ եթէ Յիսուս Քրիստոս է որդի Առ-
տուծոյ . . . : Իբրեւ ելին ի ջրոյ անտի՛ Հոգին սուրբ
եկն ի վերայ ներքինւոյն: Գործ. Ը. 57 – 59:

9. Եթէ որ ոչ ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ, ոչ կարէ
մտանել յարբայութիւնն Աստուծոյ: Յուն. Գ. 5:

10. Մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդոց եւ
Հոգւոյն սրբոյ: Մատ. Իլ. 40:

11. Թնջ տուք մանկուոյդ եւ մի արդելուր զդոսա-
զի այդպիսեացդ է արբայութիւն երկնից: Անդ. Ժ. 44:

2. Հոգին սուրբ օծանէ զմեղս մեր . . . եւ առնէ քրիստոնեայս եւ քրիստոսընկալս. եւ յայսմ օծութենէ զօրանամք զիտել զամենայն: Ն. Լուսէ. է ժառըն Հայոցն ունոյ:

3. Սոյնպէս ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով, զհոգոյն զօրութիւն սովիմք եւ ի սոյն համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի: Գրէ. Նոր. Ղ.Դ:

Հ. ՊՐՈՉՄԸ ԲԻՆՔ Է:

Պ. Խորհուրդ Եկեղեցւոյ որով մկրտուողը սրբարար ՄԵՏՈՆԻ դրոշմամբ աներևութաբար կընդունի Հոգւոյն սրբոց զօրացուցիչ շնորհը¹⁾, և չոգեղորապէս կզինուորի Քրիստոսի²⁾:

Հ. ՊՐՈՉՄԸ ԲԻՆՔ առաքինութիւն կպատճառ է մեզ:

Պ. Աղիութիւն, որով իրեւ զինուորեալ Քրիստոսի, մղութեանց Կյաղթեմք և անուանակից կլինիմք Քրիստոսի³⁾:

Հ. ԲԻՆՔ Հարկաւոր է ՊՐՈՉՄԸ կատարելու:

Պ. Կիւթ՝ որ է ՄԵՏՈՆ, տեսակ՝ արարողութիւնը, Ենթակայ՝ պաշտօնեայ և էական բանն:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Բ. ՊՐՈՇՄԻ

4. Օծութիւն ունիք առ ի սրբոյն . . . օծութիւնն զոր ընկալարուք ի սմանէ, բնակեսցի ի ծեզ: Ա. ՅԱՀ
հան. Բ. 20—24:

181

գ. ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆՆ Ի՞Նչ է:

Հ. Ապաշխարութիւնն ի՞նչ է:
Պ. Խորհուրդ Եկեղեցւոյ որ կատարեալ զբով
մամէ կարգարացնէ զմեղուցեալն՝¹⁾ իւր մեղքը
Աստուծոյ խոստովանելով քահանայի յառաջ²⁾
որով և Քրիստոսի չարչարանաց շնորհիւ թոռու-
թիւն մեղաց կընդունի³⁾.

Հ. Ո՞վ սահմանեց ապաշխարութեան Խոր-
հուրդը:

Պ. Քրիստոս Տէրն մեր, որ կքարոզէր, ապաշ-
խարեցէք, զի մերձեալ է արքայութիւն Երկնից⁴⁾,
և Առաքելոց տուաւ իշխանութիւն զմեղու թող-
լոյ⁵⁾:

Հ. Ամեն քրիստոնէի հարկաւոր է ապաշխա-
րութիւն:

Պ. Անշուշտ, որովհետեւ և ոչ մէկն մեղքից
ազատ է⁶⁾, և փրկուելու ուրիշ միջոց չկայ՝
բաց յապաշխարութենէ⁷⁾:

Հ. Ապաշխարութեամբ ամեն մեղք կորուին
թէ ոչ:

Պ. Այս Աստուծած կորէ մեր մեղքը ըստ
իւր խոստման⁸⁾, երբ Խոստովանիմք նմա միջ-
նորդութեամբ քահանայի երբ Կյառաջադրեմք
շմեղանչել այլ ևս՝ կատարեալ զղջմամբ:

Հ. Ի՞նչ առաքինութիւն արած կլինիմք ա-
պաշխարութեամբ:

Պ. Երդարութիւն, որով Աստուծոյ օրէնքը
կապառեամք, մեղքը կատեմք⁹⁾:

Հ. Ինչու Խորհուրդ կասուի ապաշխարութիւ-
նը:

Պ. Խորա համար՝ որ Քրիստոսի Էական բանն
ասելով, կհաւատամք թէ կարգարանամք աս-
տուծային բանիւս¹⁰⁾:

Հ. Ի՞նչ կըհարկաւորին ապաշխարութեան
Խորհուրդը կատարելուն:

Պ. Նիւթ՝ որ է խոստովանելի մեղքը տեսակ՝
խոստովանութեան կերպը ենթակայ՝ ապաշխա-
րողը պաշտօնեայ և Էական բան:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Գ. ԱՊԱՀԽԱՐՈՒԹԵԱՆ.

4. Լուեալ զայս, զղջացան ի սիրտս իւրեանց եւ
ասեն, զինչ զործեցուք. ասէ յնոսս Գետրոս, ապա-
շաւեցէք: Գործ. Բ. 57. 58:

2. հաղումք ի հաւատացելոցն գային եւ խոստովան լինելին, եւ պատմէին զգործս իւրեամբ: Անք,
ԺԹ. 48:

3. Յիսուս՝ զի սրբեցէ արեամբն իւրով զժողովորդն՝ արտարոյ դրանն չարչարեցաւ: Եթ. ԺԹ. 42:

4. Մաս. Դ. 47:

5. Առէք զՀոգին տուրք. Եթէ ումեք Թողուցուք զմեղս՝ Թողեալ լիցի. Եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի: Յակ. Խ. 25:

6. Եթէ ասիցեմք, Եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զամինս լաբեմք, եւ ճշմարտութիւն ի մեղ ոչ գոյ՝ ապա Եթէ խոստովան լինիմք զմեղս մեր, հաւատարիմէ նա՛ եւ արդար առ ի Թողով զմեղս մեր: Ա. Յակ.

Ա. 8. 9:

7. Եթէ ոչ ապաշխարեսչիք, ամենեքեան նոյնպէս կրնիջիք: Ղուկ. ԺԳ. 5:

8. Եթէ իցեն մեղք ձեր իրեւու զծանծախարիթ, իրեւու զծիւն սպիտակ արարից: Եաս. Ա. 18:

9. Ասա զանօրէնութիւնս քո, զի արդարացիս:

10. Զոր միանդամ արծակիցէք յերկրի, եղիցի արծակեալ յերկինս: Մաս. ԺԶ. 49:

Տողութիւն է մաս և ըստ ու մասնակի ամենը և մասաւուն, մաս ու զժողով քար և մաս առ սուսակի բանական լուցաւ չէ:

Դ. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ:

Հ. Հաղորդութիւնն ի՞նչ է:

Պ. Խորհուրդ Եկեղեցոյ որով սրբագործեալ հացը Ճաշակելով, Քրիստոսի մարմինը կճաշակեմք¹⁾, և զինին Ճաշակելով, Քրիստոսի արիւնը կճաշակեմք²⁾, ի թողութիւն մեղաց, և յափեական կենաց արժանաւորելու³⁾:

Հ. Ինչո՞ւ համար այս խորհուրդը Հաղորդութիւն կասուի:

Պ. Խորա համար ո՞ւ Քրիստոսի խորհրդական Մարմին և Արիւնը Ճաշակելով՝ Քրիստոսի հետ հաղորդութիւն կունենամք, այս ինքնն կմիանամք Քրիստոսի հետ որով և մեք ի Քրիստոս կբնակիմք, և Քրիստոս ի մեղ⁴⁾:

Հ. Հաղորդութեան խորհուրդը ո՞վ աւանդեց:

Պ. Քրիստոս ի Վերնատանն, ուր լնթրեաց եաբը՝ հացը ձեռքը առաւ, օրհնեցի և աշակերտաց տուաւ ասելով. Առէք կերէք՝ այս է մարմին իմ, և բաժակն օրհնեց ու ասաց, Արբէք ի

զմանէ ամենեքեան, զի այդ է արիւն է իմ նորոց
ուխտի 5). զայդ արարէք առ իմց յիշատակի 6):

Հ. Ի՞նչ հացով սահմանեց Քրիստոս Հա-
ղորդութեան խորհուրդը:

Պ. Բաղարջ հացով, - որովհետև բաղարջա-
կերաց օրերն էր 7), - և անապակ զինով 8):

Հ. Ի՞նչ կհարկաւորին խորհրդոյ Հաղորդու-
թեան:

Պ. Նիւթ՝ որ է հացն և զինի, տեսակ՝ արա-
րողութիւն խորհրդոյն, պաշտօնեայ և էական բա-
նըն :

Հ. Ո՞ր առաքինութիւն կհայի ի խորհուրդն
հաղորդութեան:

Պ. Աէր Քրիստոսական օրէնքը պահպանելու
համար :

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Դ. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ.

1. Հացն զօր ես տաց նմա, նշմարիտ մարմին իմ
է: ՅԱՀ. Զ. 52:

2. Եւ առեալ բաժակ, ետ նոցա եւ ասէ, արքէք
ի դմանէ ամենեքեան, այդ է արիւն իմ: Մարդ. ԻԶ.

27:

3. Որ ուտէ զհացս զայս, կեցցէ յափտեան: ՅԱՀ-
ՀԱՆ. Զ. 59:

4. Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ,
իս բնակեսցի, եւ ես ի նմա: ԱՆԴ. 57:

5. Նշանակաւ նացին տաւեալ լինի քեզ մարմին,
եւ նշանակաւ զինույ տուեալ լինի քեզ արիւն: ՅԱՀ-
ՌԱՒԵ. Է ԻԴ. Հաւան ինորդութեան:

6. ՅԱՀ. ԻԲ. 49:

7. Առեալ զհացի սեղանոյ անտի՛ յալտէ թէ բա-
ղարջ, բանդի՛ առաջին օր էր բաղարջակերացն, ասէ,
այս է մարմին իմ: ՇԱՐԴԻ. Է ՇԱՐԴԻՆ ՄԱ Մ. Հայուշ:

8. Քրիստոս . . . էալ ի մեռս զինի, եւ ասաց.
այս է արիւն իմ, եւ անուն ջրոյ ոչ բնաւ յիշապա-
կի: ԱՆԴ:

Պ. Պատկի խորհուրդը ինչո՞ւ օգտակար կհամարուին

Պ. Աստուածային հրամանը պահպանելու և մարդկային ազգը բաղմանալու համար 7), և պոռնկութեան մեջ չանկանելու 8):

Հ. Քանի՞ անգամ օրէկը է մարդու ամաւանալց:

Պ. Մինչեւ երեք անգամ՝ կնոջ վախճանելէն եօքը 9):

Հ. Երեքն աւելի օրինաւոր կհամարուի ամուսնութիւնը:

Պ. Եկեղեցական կանոնք կարգելուն չորրորդ ամուսնութիւնը՝ որովհետեւ աստուածային և առքելական սահմանադրութենէն դուրս է 10):

Վ. ԿՈ. ՑՈՒԹԻՒՆՔ Ե. ՊՍԱԿԻ.

1. Թողքէ այր զիայր եւ զմայր, եւ երթիցէ զինտ իւրոյ, եւ եղիցին երկորեան ի մարմին մի:

Մարտ. Ժ. 6:

2. Անեցէք եւ բաղմացարուք եւ լցէք զերկիք: Ն.

Գ. 28:

5. Ծ. Գ. 28:

4. Մարտ. Ժ. 6:

Ե. ՊՍԱԿ.

Հ. Ի՞նչ է պատկի:

Պ. Խորհուրդ Եկեղեցւոյ որովայր և կին աղօթքով և Եկեղեցւոյ օրհնութեամբ համաձայնելով միմեանց հետ՝ կմիանան ի մի մարմին 1), զաւակ պտղաբերելու համար 2):

Հ. Պատկի խորհուրդը ով սահմանեց:

Պ. Աստուած, որ զնախասութեամ օրհնելով, ասաց, Աճեցէք և բաղմացարուք 5). զոր Քրիստոս ևս հաստատեց. Զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեսցէ 4):

Հ. Պատկի խորհուրդը ինչպէս կը կատարի:

Պ. Քահանայի աղօթքովն ու օրհնութեամբ որովայր և կին օրինաւոր ամուսնութեամբ կը միանան յօրինակ Քրիստոսի հոգեոր միութեան Եկեղեցւոյ հետ 5):

Հ. Պատկի խորհրդով ի՞նչ առաքինութիւն արած կինիմբ:

Պ. Քարեխասունութիւն, որով ախտաւոր ցանկութենէ ազատ կինին ամուսնացեալք, զի ամուսնութիւնն սուրբ է և պատուական 6):

Յ. Եղիշին երկորեան ի մարմին մի խորհուրդս
այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեւ
ցի: Եվկտ. Ե. 54:

Յ. Պատուական է ամուսնութիւնը և սուրբ են
անկողինք: Զի՞ որ կմնայս ունիցին, որպէս թէ աչ
ունիցին: Ա. Կուշ. Է. 20:

Յ. Ծն. Գ. 28:

Յ. Բարեւք է մարդոյ ի կին մարդ չսերծենալ, բայց
վասն պունկութեան իւրաքանչիւր որ զիւր կին կալ-
ցի: Անդ. 4-2:

Յ. Չերրորդ ամուսնութեանն հրաման, որով զիջաք
առ ժամանակիս ծննդոց տկարութիւն, հաւանեցու-
ցանեմի կանոնական զրովք: Յ. Լամբ. է լորին. առ-
լեռն որդոյ:

Յ. Սուազին ամուսնութիւն օրէնք են, երկրորդն՝
ներումն եւ զիջումն, երրորդն պարականոն. որ որ
զայս թիւ անցանէ, խողային է զիտովին: Գրէ. Ա. Առքն.
Հոռո, Լ. Է.:

Յ. Եղիշին գլուխ գոյացածուած ու զննելու է.

Յ. Եղիշին գլուխ գոյացածուած ու զննելու է.

Յ. Եղիշին գլուխ գոյացածուած ու զննելու է.

Յ. ԿԱՐԳ ՀԱՅ ԶԵՌՆԱԾԴՐՈՒԹԻՒՆ.

Հ. Ի՞նչ է Կարդը:

Պ. Խորհուրդ Եկեղեցւոյ որով կարգառուն
ժողովրդոց ընտրութեամբ Եպիսկոպոսէն քահա-
նայական ձեռնադրութիւն ընդունելով (1), կը
կարգուի պաշտօնեաց Եկեղեցւոյ և հովիւ ժողո-
վըրդեան (2):

Հ. Ձեռնադրութեան Խորհուրդը ով հաս-
տատեց:

Պ. Քրիստոս Տէրն մեր, որ իւր աշակերտքը
օրհնելով Զիթենեաց լերան վրայ (3), տուաւ նո-
ցա շնորհ և աստիճանս (4):

Հ. Առաքեալք ինչպէս կը կատարէն ձեռ-
նադրութեան կարգը:

Պ. Կընտրէին յերիցութիւն և յառաքելու-
թիւն այն անձննքը, զորոնք սուրբ Հոգին ի գործ
պաշտաման կը կոչէր (5), և աղօմքով կձեռնա-
զրէին զնոսա Եկեղեցւոյ պաշտօնը կատարելու
համար (6):

Հ. Այժմ ինչպէս կը կատարի ձեռնադրու-
թեան կարգը:

Պ. Զեռնաղրութեամբ և աղօթքով Առաքեական սահմանադրութեան համաձայն, և ի տեղի զգալի նշանաց Հոգոցն սրբոյ իջման 7)՝ հօծանեն զընտրեալն սրբալոյս մեռնաւ, եթէ Քահանայ լինի ձեռնաղրեալն, կամ Եպիսկոպոս:

Հ. Ի՞նչ առաքինութիւն կտայ կարգն ձեռնադրութեան :

Պ. Խոհեմութիւն, որով ձեռնաղրութիւն կըպարտաւորի Աստուծոյ ժողովուրդը բարւոք հովուել 8) :

Հ. Զեռնաղրութեան աստիճանը քանի՞ :

Պ. Եօթը, ա. դռնապանութիւն, բ. զպրութիւն կամ ընթերցողութիւն, գ. երդմնեցուցութիւն, դ. ջահընկալութիւն, է. կիսասարկաւագութիւն, շ. սարկաւագութիւն, ւ. քահանայութիւն :

Հ. Եպիսկոպոսութիւնն և Կաթուղիկոսութիւն ո՞ր աստիճան կհամարուին :

Պ. Եպիսկոպոսութիւնը Եկեղեցւոյ ութերորդ աստիճան կհամարուի, որ եօթն աստիճանքը ևս իւր մէջ կապարունակէ, իսկ Կաթուղիկոսութիւնը՝ որ զերազանց է Եպիսկոպոսութենէն, է ծայրագյն իշխանութիւնն որ կասուի և Եպիսկոպոսապետութիւն 9) :

Հ. Որո՞ց արժան է աստիճան կամ կարդ ձեռնադրութեան տալոյ :

Պ. Նոցա միայն, որոնք բաւական զիտութիւն ունելով՝ ուղիղի ևս կարող են ուսուցանել 10). որոց բարուց և կրօնքի մաքրութեան համար կըվկայէ ժողովուրդը 11) :

Վ.ԿԱՅՈՒԹԻՒՆՔ Զ. ԿԱՐԳԻ ԿԱՄ

ԶԵՐՆԱԴՐՈՒԹԵԱՆ.

4. Մինչեռ ի պաշտաման Տեառն կալին եւ պահէին, ասէ Հոգին սուրբ. որոշեցէք լինծ զբանաբաս եւ զՍողոս ի գործ յոր կաչեցեալ է իմ զրոսա. յայնժամ պահիեալ եւ աղօթս արարեաբ եղին մեռս ի վերայ նոցա եւ արժակեցին: Գ. Պ. Ժ. 2. 4:

5. Եղ զծեզ Հոգին սուրբ տեսուչս, հովուել զժողովուրդ Տեառն: Ա. Ի. Ի. 28:

6. Եհան զնոսա մինչեւ ի Բեթանիա, եւ ամբարձեալ զծեռու իւր' օրհնեաց զնոսա: Ղ. Ի. Ի. 50:

7. Մի անփոյթ առներ զջնորհացդ որ ի քեզ են, որ տուաւ թեզ մարգարէութեամբ ի մեռնաղրութենէ երիցութեան: Ա. Տ. Պ. 44:

8. Գ. Պ. Ժ. Ժ. 2. 4:

6. Զեռնադրեցին նոցա ըստ Եկեղեցւոյ երիցունս,
աղօթս արարեալ հանդերձ պահօք, յանձն արարին
զնոսա Տեառն, յոր հաւատացեալն էին: Ա՞՞՞ Ժ՞.

22:

7. Մինչեռ խօսէր Պետրոս զբանս զայս, հան-
դեալ Հոգին սուրբ ի վերայ ամենեցուն, որ լսէին ըզ-
բանն . . . լսէին ի նոցանէ խօսել մեզուս: Ա՞՞՞ Ժ՞.

44• 46:

8. Զգոյշ կացէք անճանց եւ ամենայն հօտիդ. յո-
րում եղ զգեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժո-
ղովուրդ Տեառն: Ա. Տէ՞՞ Գ. 14:

9. Ունին կաթուղիկոսք առաւելութիւն պատույ
քան զԱրքեափիսկոպոս . . . ունի իշխանութիւն մեռ-
նադրել նոցա Եպիսկոպոս: Լո՞մբ. է Քն. Կոբքաց ե-
ղէլլուս:

10. Եւ զոր լուար յինէն բազում վկայիւք, զայն
աւանդեսցես հաւատարիմ մարդոց, որը բաւական
իցեն եւ զայլս ուսուցանել: Բ. Տէ՞՞ Բ. 2:

11. Պարտ է Եպիսկոպոսին վկայութիւն բարի եւ
յարտաբնոցն ունել: Ա. Տէ՞՞ Գ. 7:

կ. ՕՇՈՒՄՆ ՀԻՒԱՆԴԱՑ.

Հ. Ի՞նչ է օծումն Հիւանդաց:

Պ. Խորհուրդ Եկեղեցւոյ որ Հիւանդաց կտայ
Հոգեւոր և մարմնաւոր առողջութիւն սահմանա-
զրեալ աղօմից շնորհքով (1):

Հ. Վերջին օծման խորհուրդը ո՞վ աւանդեց:

Պ. Քրիստոս Տէին մեր զոր ինքն ևս կը կա-
տարէր (2). որ եւ իւր աշակերտացն ևս սուաւ
իշխանութիւն Հիւանդները բժշկելու (3):

Հ. Առաքեալք ի՞նչպէս կը կատարէին այս
Խորհուրդը:

Պ. Հիւանդաց վրայ ձեռք դնելով, աղօմք
կանէին, և իւղով Հիւանդները կօծանէին յա-
նուն Տեառն (4):

Հ. Հիւանդաց օծումը ի՞նչ օգուտ կտայ Հիւ-
անդին:

Պ. Բժշկութիւն մարմնոյ և թողութիւն մե-
րաց (5):

Հ. Մեր Եկեղեցին ինչպէս կմատակարարէ Հիւ-
անդաց օծման խորհուրդը:

Պ. Առանց օծութեան իւղ գործ դնելց՝ ա-
զոմք անելով, և հիւանդի վերայ ձեռք դնելով,
համաձայն Քրիստոսի հրամանին 6):

Հ. Կարելի՞ է առանց օծութեան իւղ այս
խորչուրդը կատարել:

Պ. Այս Քրիստոսական հրամանին համա-
ձայն զոր և առաքեալք կանէին որոնք առանց օ-
ծութեան իւղցին՝ ձեռք դնելով հիւանդաց վրայ՝
բժշկութեան կտային նոցա 7):

ՎԿԱՑՈՒԹԻՒՆԻՑԻ Է. ՕՄՄԱՆ ՀԻՒԱՆԴԱՅ.

1. Օծանէին իւղով զբաղումս հիւանդաց եւ բժշ-
կէին զնոսա: Մարէ. Զ. 45:

2. Ամեներեան որոց էին հիւանդը ի պէս պէս
ցաւս բերէին առ նա եւ նա իւրաքանչյուր ումեք ի
նոցանէ զնէր ձեռս եւ բժշկէր զնոսա: Ղ. Զ. Դ. Դ. 44:

3. Զիւանդս բժշկեցէք, դրորոսս սրբեցէք: Մար-

40. 8 :

4. Հիւանդանայցէ որ ի մէնջ, կոչեսցեն վերիցունս
եկեղեցւոյն եւ արացեն ի վերայ նորա աղօթս, օծ-
ցին իւղով յանուն Տեառն. աղօթքն հաւատով՝ փրկես-
ցէ զաշխատեալն: Յարէ. Ե. 44:

5. Եթէ մեղս ինչ իցէ գործեալ Թողջի նմա . . .
աղօթք արդարոց զօրաւոր են յօդնականութիւն: Անդ:

6. Ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն եւ բժշկես-
ցին: Մարէ. Ճ. Ճ. 48:

«Ո՞չ իւղն տայր առողջութիւն հիւանդին, այլ ա-
նուն Տեառն: Ա. Շաբէհ. է Մէկ. Յ. Հ. Ճ. Ա. Ա.:

7. Եւ հօրն Պոպկեայ ի չերմն եւ յախտ Թանջիր
հիւանդանալ զնել: առ որ մտեալ Պօղոս եւ կայենալ
յաղօթս, եղ զծեռն եւ բժշկեաց զնա: Գ. Պ. Զ. Ի. 8:

ՄԱՍՆ ՄԵՏԱՍՏԱՆԵՐՈՐԴԻ.

Յարութիւն օւուշոց:

Հ. Ինչպէս լինելու է յարութիւն մեռելոց:

Պ. Աստուածային զօրութեամբ պիտի յարու-
թիւն առնեն մեռեալք ու կենդանանան 1):

Հ. Մեռելոց յարութեան համար ուր կվկայի
սուրբ զրոց մէջ:

Պ. Նոր Կտակարանի մէջ շատ տեղ 2), բայց
յայտնապէս՝ Պանիէլ մարդարէն կվկայէ, պիտի
յարութիւն առնուն մեռեալք, ոմանք ի կեանս
և ոմանք ի պատուհաս: (ԺԲ. 2) :

Հ. Խնչու համար. լինելու և յարութիւն մեռելոց :

Պ. Ամեն մարդ իւր զործոց հատուցումն առանելու համար 5). արդարը յաւիտենական կեանք և մեղաւորք յաւիտենական տանջանք 4) :

Հ. Սեսւալք յարութիւն առնելն ետքը ի՞նչ կլինի :

Պ. Կենդանի մնացած մարդիկն ևս յարութիւն առնողների հետ ի միասին պիտի յափշտակուին յօդս Աստուծոյ յառաջ, և հրեշտակաց հաւասար՝ իբրև որդիք Աստուծոյ՝ նորա հետ լինելու նն 5).

Հ. Ե՞րբ պիտի լինի յարութիւն մեռելոց,

Պ. Քրիստոսի երկրորդ զալաւեանը 6) :

Հ. Որո՞նք կուրանային մեռելոց յարութիւնը,

Պ. Սադուկեցիք, Ստոյիկեակը Եղիկուրեակը Հիմնոս, Փիղետոս և լն 7) :

ՎԱՅՈՒԹԻՒՆՔ ՄԵՏՍ.ՍՍ.ՆԵՐՈՐԴ ՄՍ.ՍԻՆ:

4. Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյնպէս ետ եւ որդուց իւրում զորս կամի՝ կենդանի առնէ; Յո՞վու եւ 24:

2. Որպէս Աղամաւն ամեներին մեռանին, նոյնպէս եւ քրիստոսի, ամեներեան կենդանացին: Ա. Կո՞չ քիչ 22:

5. Եկեսցէ ժամանակ յօրում ամեներին որ ի գերեզման կայցեն, լուլցեն ձայնի նորա, եւ եկեսցին արտաք: Յո՞վու եւ 24:

4. Յայնժամ հատուցիք իւրաքանչիւր ըստ զործս իւր: Մա՞ս. քԶ. 28:

« Որոց բարիս զործեալ իցէ, ի յարութիւն կենաց, եւ որոց չար արարեալ, ի յարութիւն զատաստանաց: Յո՞վու եւ 29:

„ Երթիցեն մեղաւորք ի տանջանս յաւիտենականս, եւ արդարն ի կեանս յաւիտենականս: Մա՞ս.

քԶ. 46:

5. Իսկ մեր որ կենդանիքս եմք մնացեալք՝ ի զալաւեանն Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն . . . եւ մեռեալք՝ ի Քրիստոս յարիցեն յառաջադրյն, . . . եւ մեր նորօք հանդերձ յափշտակիցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս, եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք: Ա. թէւ. Դ. 44. 46:

« Եւ ոչ մեռանիլ եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են եւ որդիք Աստուծոյ: Դ. մ-կ. Եւ 56:

6. Յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր,
յայնժամ եւ դուք լնի նմա յայտնեսցիք փառօք; Կո-
չու Դ. 4:

7. Մատուցեալ ոմանք ի Սադուկեցոցն, որբ հա-
կառակէին լինել յարութեան, հարցին զնա: Ղուկ.
ի. 27:— Երբեւ լրան գյարութիւն մեռելոց, ոմանք
Եպիկուրեանց եւ ի Ստոյիկեանց փիլիսոփայից ծա-
ղըր առնէին զնա: Գործ. ԺԷ. 52:

ՄԱՍՆ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

ՎԵՐՁԻՆ ԴԱՏԱՍՏԱՏԱՆ.

- Հ. Վերջին դատաստանը Երթ լինելու է:
- Պ. Քրիստոսի երկորդ գոլուտիանը ¹⁾։
- Ե. Երթ լինելու է երկորդ գալուստն:
- Պ. Ո՛չ ոք զիտէ, ասաց Քրիստոս, ո՛չ հրեշ-
տակը յերկննու և ո՛չ Որդի, բայց Հայո միայն ²⁾։
- Հ. Խնչուէն լինելու է վերջին դատաստանն:
- Պ. Ի կատարածի աշխարհիս գալու է Որդին
մարդոյ զօրութեամբ և բազում փառքով ³⁾, և
ընտրեալները ժողովելու է աշխարհքիս չորս կող-
մէն՝ ի ծագաց երկնից մինչև ի ծագս նոյս:
- Հ. Աշխարհքիս կատարածի նշանները որմնիք
են:
- Պ. Արեգակը կիսաւարի լուսինը լոյս չի տալ..
և Որդոյ մարդոյ նշանը երկները կերւի ⁴⁾։
- Հ. Ի՞նչ յատկութիւն ունի վերջին դատաս-
տանը:
- Պ. Վերջին դատաստանը լինելու է ընդհան-
րական ⁵⁾, արդար ⁶⁾, և հանդիսաւոր ⁷⁾:

Հ. Խնչոն համար լինելու է վերջին դատաստանը :

Պ. Մեռեալք ու կենդանիքը դատելու համար 8), և իւրաքանչիւր դործոց հատուցումն առնելու համար 9) :

Հ. Խոնչ հատուցումն լինելոց է արդարոց և մեղաւորաց :

Պ. Արդարոց կեանք յաւիտենական, մեղաւորաց տանջանք յաւիտենական 10) :

Հ. Խոնչ է կեանքն յաւիտենական և տանջանքն յաւիտենական:

Պ. Մշտնջենաւոր երջանիկ վիճակ հանգստեան սրբոց հետ 11), աստուածային փառքը վայելելու համար 12), իսկ յաւիտենական տանջանքն է դատապարտելոց թշուառ վիճակը դժոխի մէջ 13), մեղաւորաց Աստուծոյ տեսութենէն զրկուիլը 14), և տանջանք խողջի մնաց խաւարի մէջ 15) :

Հ. Վերջին դատաստանի դատաւորն ովկ է :

Պ. Քրիսոս միայն և կենդանեաց և մեռելոց դատողը 16), իւր առած մարդկային մարմուկը 17) :

Բ. ԿԱՅՑՈՒԹԻՒՆՔ ԵՐԿՈՏՈՍՈՒԾԵՐՈՐԴ ՄԱՍԻՆ.

4. Եղոժամ եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք եւ ամենայն հլեշտակը ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն աղդք, եւ մեկնեսցէ զնասա ի միսեանց Մասու ԵՊ. 51. 52:

2. ԱՆԴ, 56:

5. ԱՆԴ, 54:

4. ԱՆԴ, 29. 50:

5. Ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի քրիստոսի: Բ. Կոբեն, Բ. 40:

6. Դատաստան Տեառն ծշմարիտ է, եւ արդար է ի նոյն: Սաղմուս:

7. Ժողովեսցին առաջի նորա ամենայն աղդք: Մասու ԵՊ. 51:

8. Գալոց է նովին մարմուկն եւ փառօք հօր ի դատել զիմանանիս եւ զմեռեալս: Հանդառակն հաստատ:

9. Զի ընկալցի իւրաքանչիւր իւրով մարմուկն զոր ինչ դործեաց յառաջ, եթէ բարի եւ եթէ չար: Բ. Կոբեն Ե. 40:



40. Երթիցեն մեղաւորք ի տանջամսն յաւիտենկա-
կանս, եւ արդարք ի կեանսն յաւիտենականս: Մատ:

ԻԵ. 56:

44. Արժանի լինել մեզ արքայութեանն Աստու-
ծոյ . . . հատուցանել նեղչայն մերոց գնեղութիւնն
եւ մեզ նեղելոցդ զիանդիստ ընդ մեզ ի յայտնութեա-
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Բ. Թէա. Ա. 5. 7:

42. Տեսանիցեն զիառսն իմ զոր ետուրն ցիս:
Յով. Ժէ. 24:

, Լուսով փառաց քոց տեսանեմք զլոյս: Ատա:

45. Երթայր յինէն անիծեալք ի հուրն յաւիտենա-
կան: Մատ. ԻԵ. 44:

44. Որք տայցեն վրէժս ի սատակումն յաւիտենից
յերեսաց Տեառն: Բ. Թէա. Ա. 9:

45. Արկցեն զնոսա ի հնոց հրոյ, անդ եղիյի լաւ
եւ կրծել ատամանց: Մատ. Բ. 42:

46. Եւ ոչ եթէ չայր դատէ զոր, այլ զամենայն
դատաստան ետ որդույ իւրում: Յով.

47. Հաստատեաց Աստուած օր, յորում պանրտ է
դատել զաշխարհս արդարութեամբ, ի մեռն Առն (Քը-
րիստոսի) որով սահմանեայ տալ հաւատս ամենե-
ցուն' յարուցեալ զնա ի մեռելոց: Գովծ. Ժէ. 54:

spieß. Rennungen für zweckmässige Ausführungen
sind in einer Reihe von Blättern vorliegend, welche 17 cm.

die gleiche Zahl der entsprechenden Rennungen
enthalten. Die Rennungen sind ausgedehnt, abwechselnd
die Abstände zwischen den Rennungen verschieden.
Die Rennungen sind so gezeichnet, dass die Stütze
der Spiegelchen zwischen den Rennungen gleich
ist. Abb. 24.


Die ersten vierzehn Rennungen sind auf einer Seite
der Rennungsfalte aufgezeichnet, die letzten vierzehn
auf der gegenüberliegenden Seite. Abb. 25.


Die Rennungen sind so gezeichnet, dass die Abstände
dazwischen gleich sind.

Die Rennungen sind so gezeichnet, dass die Abstände
dazwischen verschieden sind.

Die Rennungen sind so gezeichnet, dass die Abstände
dazwischen verschieden sind.

Die Rennungen sind so gezeichnet, dass die Abstände
dazwischen verschieden sind.






3 p

3332

ՀՊ

«Ազգային գրադարան



NL0268435

